ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
COMMUNIST PARTY OF ARMENIA
ՀԿԿ

«ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ»

Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը մասնակցելով 2025թ մարտի 30-ի Գյումրի համայնքի համամասնական ընտրակարգով անցկացվող Ավագանու արտահերթ ընտրություններին, ներկայացնում է ծրագիր՝ վստահ լինելով, որ այն կարժանանա քաղաքի ընտրողների և ազգաբնակչության հավանությանը:

Մեր ծրագիրը նպատակ ունի ներկայացնել մեր ժողովրդի հայրենանվեր աշխատանքով, Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ձեռք բերված վիթխարի նվաճումները Սոցիալիստական Հայաստանի 70 տարիների ընթացքում:

Այդ տարիները եղել են վերելքի տարիներ բոլոր ոլորտների համար, կառուցապատվել և շենացվել են մեր հայրենիքի գյուղերն ու քաղաքները, զարգացել և վերազինվել է արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, գիտությունն ու կրթությունը, առողջապահությունն ու մշակույթը:

Թվարկելով սոցիալիզմի ժամանակաշրջանում մեր քաղաքի ձեռքբերումները, մենք չենք ուզում խոսել միայն անցյալի հուշերից, այլ հենվելով այդ ձեռքբերումների վրա, ցույց տալ այն ճանապարհներն ու հնարավորությունները, որոնցով կհաղթահարենք այսօրվա հանրային կյանքում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, որոնք խոչնդոտում են տնտեսական բնականոն զարգացումները:

Մեր ժողովրդի կերտած 70 հերոսական տարիները շատ ուսանելի դասեր են, որոնք սխրանքների և արարումների պատմությունն են, ավագ սերնդի անմնացորդ նվիրումով կերտած հասարակարգն է, որը պետք է գնահատել, արժևորել և վերադարձնել:

Ներկայիս ժամանակշրջանում մեզ անհրաժեշտ է հասարակությունը դարձնել սոցիալապես արդար, բարեկեցիկ ու միասնական, որտեղ բավարար պայմաններ կլինեն մեր քաղաքի յուրաքանչյուր բնակչի համար: Մեր ծրագրի գլխավոր նպատակն է վերահաստատել այն սոցիալական արժեքներն ու իրավունքները, որոնցով օժտված էին մեր քաղաքացիները, ապահովել աշխատանք բոլորի համար:

Մենք գնում ենք ընտրությունների՝ նպատակ ունենալով առավելագույնս նպաստելու Գյումրի քաղաքում սոցիալ-տնտեսական և հոգևոր կյանքի

վերածննդին, որի նվիրական գործում, իր երկարամյա կառավարման ժամանակաշրջանում անուրանալի ներդրում է ունեցել նաև մեր ցուցակի առաջին համար՝ Վարդան Ղուկասյանը:

Իրավատնտեսական բարեփոխումներ

1. Առաջ քաշել Գյումրին **ազատ տնտեսական գոտի** դարձնելու օրակարգը: **Օրինականացնել** քաղաքացիների՝ տարիներով ձգձգվող **ավարտական ակտերն ու շինթույլտվությունները**:
2. **Աջակցել** ծայրամասերում կառուցված քարաշեն տնակների **օրինականացմանը**:
3. **Զիջել** հնամաշ ավտոմեքենաների **գույքահարկը**:
4. Քաղաքային **բյուջեի ավելացում՝** ապօրինի շինությունների օրինականացման հաշվին:
5. **Գույքագրել** անտերության մատնված քաղաքապատկան հողերը:
6. Քաղաքապետարանում հիմնել **«Ներդրումների ուղղորդման խորհրդատվական բաժին»՝** միևնույն բաժնում ներգրավելով տվյալագետների, տնտեսագետների և ֆինանսական վերլուծաբանների:
7. Կառավարության առջև խնդիր դնել՝ գյումրեցիներին հատկացնելու աշխատավարձի հավելավճար՝ որպես բարձրլեռնային գոտու բնակիչների (հաշվի առնել միջազգային փորձը):
8. Գյումրու քաղաքապետարանի փոխարեն հանրապետական բյուջեի հոգածության տակ վերցնել Գյումրու գերազանց արդյունքներ ցուցաբերող սպորտդպրոցների ֆինանսավորումը:
9. Գյումրի քաղաքն ունի հաստատված հատակագիծ, հետևաբար քաղաքապետարանի կողմից տրվող հողհատկացման և շինթույլտվության որոշումները՝ ըստ գործող օրենքի, կարիք չունեն վերահաստատվելու ո՛չ Շիրակի մարզպետարանի, ո՛չ Քաղաքաշինության կոմիտեի կողմից: **Վերջ է դրվելու** վերոհիշյալ որոշումների տրամադրման այդ հակաօրինական պտտեցմանը, որով շարժվում է Գյումրու քաղաքապետարանը 2012 թվականից ի վեր:

Սոցիալական բարեփոխումներ

1. Տրամադրել փաստաբանական և խորհրդատվական անվճար ծառայություններ վարչական գործերով անցնող քաղաքացիներին:
2. Քաղաքային տրանսպորտի աշխատանքը երկարացնել՝
   ա. ամեն օր՝ ժամը *07:00-22:00*

   բ. քաղաքային միջոցառումների օրերին՝ ժամը *07:00-23:00*

3. **Աջակցություն տրամադրել** սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքներին՝ տնային ջեռուցման և
կենսական պայմանների ստեղծման հարցում:

4. Մանկապարտեզ հաճախող 3 և ավելի երեխաներ ունեցող անապահով ընտանիքներից **չգանձել** մանկապարտեզի հաճախման վարձավճար:
5. Հատկացնել **կրթաթոշակ** գերազանց առաջադիմություն ունեցող, միևնույն ժամանակ անապահով ընտանիքում ապրող աշակերտներին և ուսանողներին:

Քաղաքաշինական բարեփոխումներ

1. Վերականգնել բազմաբնակարան շենքերի կտուրները, բարեկարգել շենքերի մուտքերն ու բակերը: Կենտրոնական գոտում գտնվող շենքերի կտուրները **վերածել մանսարդային հարկերի**՝ ապա վաճառել դրանք կամ օրավարձով հանձնել զբոսաշրջիկներին՝ քաղաքապետարանի համար եկամուտ ապահովելով:
2. Հաստատել հատուկ ծրագիր՝ ուղղված **«Կումայրի արգելոց»**-ի բոլոր վտանգված շենքերի վերակառուցմանը՝ զգաստացնելով և պարտավորեցնելով սեփականատերերին ամրացնելու սեփական անշարժ գույքը մինչ սահմանված վերջնաժամկետը:
3. Քաղաքապետարանի անունից ձեռք բերել բազալտի արդյունահնման հանք Շիրակի մարզում և հիմնել բազալտե սալաքարերի արտադրման քաղաքապատկան գործարան՝ օգտագործելով սեփական հանքից արդյունահանված բազալտը: Սալաքարերով բարեկարգել Գյումրու «Կումայրի արգելոցի» և վերականգնման կարիք ունեցող այլ փողոցներ և մայթեր՝ երկարացնելով դրանց կյանքն ու տնտեսելով հարյուր-միլիոնավոր դրամներ:
4. **«Լինս հիմնադրամ»**-ի կողմից կառուցված բազմաբնակարան շենքերին ավելացնել ևս մեկ հարկ՝ անօթևան ընտանիքներին բնակարաններով ապահովելու կամ այդ բնակարանների վաճառքի միջոցով քաղաքապետարանի բյուջեն ավելացնելու համար:
5. Վերականգնել կամ կառուցել **ստորգետնյա անցումներ**՝ քաղաքի բանուկ ճանապարհահատվածներում: Դրանցում առանձնացնել կոմերցիոն տաղավարներ վարձակալությամբ տրամադրելու համար: Նախաձեռնությունը ոչ միայն լուծում է երթևեկության խնդիրը, այլև դառնում է եկամտի աղբյուր քաղաքապետարանի համար:
6. Խստապահանջ և **հետևողական աշխատանք** տանել քաղաքին հատկացված **սուբսիդիաների** արդյունավետ իրագործման ուղղությամբ, ներառյալ **«Անի»** թաղամասի փողոցների բարեկարգումը:

7. Վերջնականապես **լուծել թափառող շների մեկուսացման հարցը՝** քաղաքին հարակից տարածքում դրանց համար հավաքակայան-կացարան կառուցելով:
8. **Համագործակցել Ռուսական *«102»* ռազմաբազայի հետ՝** Մարմաշենի խճուղու սկզբնամասում տեղակայված և նրա պատկանելության տակ գտնվող կիսակառույց բազմաբնակարան շենքերի շինարարությունը ավարտին հասցնելու և **անօթևան ընտանիքներին**

բնակարաններով ապահովելու համար:

Կրթություն, Սպորտ, Մշակույթ, Առողջապահություն

1. **Հիմնել ռազմամարզական արտադպրոցական վարժարան բոլոր տարիքային խմբերի համար՝ սաներին պատրաստելով ԱԹՍ-ների կառավարման, մարտավարության և կրակային պատրաստության մեջ՝ համագործակցելով ռազմամարզական կազմակերպությունների հետ:**
2. Սահմանել մեծ չափի դրամական կամ այլ պարգևներ՝ խրախուսելու Հայաստանի, Եվրոպայի, աշխարհի և օլիմպիական ասպարեզներում հաղթող և մինչև պատվավոր երրորդ հորիզոնականը զբաղեցնող մարզիկներին ու մարզիչներին:
3. Պարբերաբար իրականացնել սպորտդպրոցների ներքին հարդարման, կտուրների վերանորոգման և գույքային վերազինման աշխատանքներ:
4. **Հիմնել քաղաքապատկան բժշկական կենտրոն՝** հագեցած նոր սերնդի լավագույն բժշկական սարքավորումներով և աշխատանքի հրավիրել հանրապետության առաջատար բուժաշխատողների: Ստացված շահույթը ուղղել ծանր առողջական խնդիրներ ունեցող գյումրեցի անապահով անձանց բուժմանը միևնույն հիվանդանոցում:

Բարեփոխումներ տուրիզմի ոլորտում

1. Գնացքի կայարանում, ավտոկայանում, օդանավակայանում և քաղաքի կենտրոնում **հիմնել** տեղեկատվական կետեր՝ զբոսաշրջիկներին քաղաքում ուղղորդելու համար:
2. **Վերաբացել** «Տուրիզմի զարգացման բաժին»-ը Գյումրու քաղաքապետարանում:
3. **Վերականգնել քաղաքային միջոցառումների կազմակերպումը**, այդ թվում՝ Երեխաների պաշտպանության օր, Վերջին զանգ, Հրաժեշտ մանկապարտեզին, Գալա համերգ՝ երաժշտական դպրոցների սաների մասնակցությամբ, Ոսկե աշուն, Շիրակի ծմեռ, Բագրատունյաց օր, Ազգային երգ ու պարի փառատոն, Իսահակյանական և Շիրազյան տոնախմբությունները:

Կուսակցության ղեկավար կամ լիազոր ներկայացուցիչ

(ստորագրությունը)

Երջանիկ Ղազարյան
(ազգանունը, անունը)

ՀԿՏԿ
00024375